կի մէջ չէր երեւում։ Ոտքի կանգնած, ձայնը գլխին, խօսում էր գրեթէ պոռալով, բուռնցքը զարնում էր սեղանիս, գրքերս վայր նետում, անդադար ծխում։

Լամպը տնքում էր, ճիգ էր անում եւ գրեթէ ոչ մի լոյս չէր տալիս։

— Այստեղ օդը ճնշիչ է, ասացի, աւելի լաւ կը լինի դուրս դնանք։

— Դո՞ւրս,— մտահոգ պատասխանեց պարոնը,— այս ժամին դո՞ւրս... խոհեմութի՞ւն է...

— Ի՞նչ կայ որ։

— Երեխայ ժամանակ, չախսէյ-վախսէյի օրերին, գիշերը դուրս չէի գնում. գիտէի, ամբոխի մոլեռանդութիւնը եւայլն։

— Դատարկ բաներ են...

— Դէ լաւ, ինչպէս որ ուզում էք...

Ու դուրս եկանք։

Թարխանեան փողոցը բոլորովին մութ էր։ Առաջին քայլիս ոտքս մխրճուեց ցեխի մէջ ու նոյն վայրկեանին պաղ հովը սրընթացով իջաւ եւ գլխարկս վայր նետեց։ Հազիւ կարողացայ ոտքս ազատել եւ գլխարկս գտնել։ Նայեցայ՝ մարդը անհետացել էր։ Ձայն տուի՝ ոչ ոք չպատասխանեց։

Փողոցի անկիւնում առհասարակ մի ոստիկան էր կանգնում։ Այսօր նա էլ չկար։

Փորձեցի քայլել։ Հէ՛չ է ասել քայլել... Դէ, եթէ փողոցներում լոյս չկայ, այդ մասամբ հասկանալի է, բայց տունե՛րը...

Բոլոր պատուհաններից խաւար է նայում։ Ոչ մի անցորդ կայ։ Շուքերը կպել են պատերին, փէշերը տուել ցրտին, սառել։

Վերադարձայ տուն։

2.

Այն գիշերը երբ աշխարհ եկաւ Վլադեմիր Իլիչ Ուլիանովը (Լենինը), Վոլգայի ափին նստել էր Թիմուրի ստուերը եւ իր աղեղը լարել էր աստղերի դէմ։

Միւս օրը, կնունքի աւազանում, միւռոնի արարողութեան ժամանակ, քահանան իր մատերի վրայ թանձրացած արիւն տեսաւ եւ խաչը իր ձեռքի մէջ երերաց։

Ամիսներ յետոյ, մօր ստինքների վրայ կապոյտ վէրքեր գոյացան, կաթը թթուեց, եւ իրական լորձունք փսխեց։

Ուխտաղնաց պառաւ կանայք վհուկի քայլով ներս մտան, օրօրոցի վրայ խաչ արին, ու նշան արին դէպի արեւելք ու նշան արին դէպի արեւմուտք։ Սակայն, երբ երեխան իր ճեղքուած կոպերի միջից բիբերի կանանչ փայլը շարժեց՝ կանայք ահաբեկ դուրս նետուեցին եւ լալագին երգերով Կիեւի հեռաւոր ճանապարհը բռնեցին։

Կէս գիշերին, երբ Սիմբիրսկը, մինչեւ ծունկ ձիւնի մէջ թաղուած, մարում էր իր վերջին ճրագը, Վոլգան խուլօրէն դղրդում էր։ Շառաչում էր Վոլգան, ստեպների ճերմակ լուութիւնը քշելով, փշրում էր տարածութիւնը եւ կոհակ կոհակ դուրս էր նետում իր փոթորիկը, մենակեաց գայլերի ոռնոցին բախելով։

Ութ տարեկան հասակին, Իլիչի ձեռքից դպրոցական գիրքը վայր ընկաւ, եւ նա լսեց ռուսական լայնատարած դաշտերում առաջացող Պուգաչովի երկաթէ քայլերը։ Դօգօշի նման կուտակուած, խռուած նաւակի պէս անշարժ, նա երկարօրէն ականջ դրաւ եւ իր մոնղոլական աչքերը յառեց դէպի հեռուն։

Ուրիշ մի օր, տաժանակիր բանտերի մօտից անցնելու ժամանակ, նրա աչքերը մառախուղով լեցուեցին, ու մարմնի վրայ դող անցաւ։ Բարձր պատերի ետեւ տրտում մի ըմբոստութիւն խարոյկ էր վառել, եւ երգը հնչում էր տխուր։ Իլիչը կատաղօրէն խածեց ձեռքում բռնած իր կարտուզը, շրթունքներից կաթող արիւնը մաքրեց եւ հարբած քայլերով տուն վերադարձաւ։

Մայրը մտահոգ դիտում էր զաւկի աչքերում լուռօրէն շարժուող անյայտին, եւ գիշերը տառապագին խօսում էր Աստուծոյ հետ։ Հայրը ման էր գալիս սենեակէ սենեակ ու լրտեսում էր պատերի տակ սողացող ոգիներին. իսկ Իլիչը, գրքերի մէջ թաղուած, մեքենաբար սերտում էր իր դասերը։

Ծննդեան տօնին, մինչ զանգակները, գինով երիտասարդների նման, գոյնզգոյն կօշիկներ հագած, պարում էին երկնքի մէջ, Իլիչը, գետի ափին կուչ եկած, վառօրուն իր նայուածքը մխրճում էր ձիւնի ոլորապտոյտ փո-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան